



ՊՐՈՖ. Հ. Ժ. ՍԻՐՈՒՆԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԵՐԱԽՏԱՎՈՐ

Լրացավ հայ մշակույթի բազմաբեղուն վաստակավորի՝ պրոֆ. Հ. Ժ. Սիրունու ծննդյան 80 և գրական-գիտական գործունեության 65-ամյակը: Բուխարեստից մինչև Փարիզ, Հյուսիսային Ամերիկայից մինչև Հայաստան այդ առթիվ կազմակերպվեցին ջերմ հանդիսություններ: Այդպիսով արժանին հատուցվեց ժողովրդանվեր գրողի ու բանասերի վաստակի նկատմամբ:

Շատ դժվարին գործ է գրելը մի անխոնջ մշակի մասին, որպիսին եղել է Հ. Ժ. Սիրունին, և որի կյանքի նպատակը հանդիսացել է աշխատանքը: Նա չի դադարել գրելուց, անգամ թուրքական բանտերում, 1915—1918 թթ. նույնիսկ զաղթի ճանապարհին...: Բազմազան է եղել նրա նախասիրած աշխատանքների ոլորտը, բազմահարուստ և բազմաբովանդակ՝ իր ծավալով և վեր՝ մի մարդու հնարավորություններից: Նրա ստեղծագործությունների ուսումնասիրման մյուս դժվարությունը՝ նրանց սփռված լինելն է հայ մամուլում: Միայն նրա խմբագրած ու հրատարակած հանդեսների և տարեգրքերի թիվը անցնում է 16-ից, իսկ նրա աշխատակցած հայերեն և ռուսերեն պարբերականների թիվը հասնում է շուրջ 100 անունների:

Սիրունու պոլսական ստեղծագործական կյանքը սկսվել է գրականությամբ և հրապարակախոսությամբ: Նա գրել է բանաստեղծություններ, արձակ էջեր և պատմվածքներ, թատերախաղեր, երգիծական ակնարկներ, ճամփորդական նոթեր, հուշեր, գրական ու

գրականակերպ էջեր, տոնական խոսքեր, նամակներ, գրական նշմարներ, գրախոսություններ, իր հրատարակած պարբերականների համար՝ խմբագրականներ, հրատապ հարցերի շուրջ՝ առաջնորդող հոդվածաշարեր, դիմաստվերներ: Որպես գրող և հրապարակագիր նա հայտնի է արևմտահայ գրականության անդամատանում, սակայն նրա այդ գործերի մասին խոսելը մեր նպատակից դուրս է և որը կարող է կազմել առանձին ուսումնասիրություն:

Հ. Ժ. Սիրունի—հայագետը անմիջական շարունակություն է ու դարձացումը հայ գրող և ստեղծագործող Սիրունու: Առաջին հայացքից կարծեք բոլորովին մի ալլ անձնավորություն է, որ ընթանում է հայագիտության շավիտներով, սակայն, երբ իր պատմագիտական գործերու համեմունք է գրականով, մեկն այն ժամանակ է, որ մարդ կարող է նկատել, որ նրա հեռանակը նաև գրող է: Ռումինիայում ապաստան գտնելուց հետո, նրա հրապարակախոսական և գրական աշխատանքների կողքին, տիրապետող է նաև բանասերն ու պատմաբանը:

Պատանի Սիրունին սնվեց ու թրծվեց Կոստանդնուպոլսում, հայ պատկառելի մտավորականների շնչով: Կերտոնական վարժարանում նա հայագիտության և արևելագիտության ասպարեզներում իրեն իբր ուսուցիչներ ունեցավ Հակոբ Գուրգենի, Հրանտ Ասատուրի, Հակոբ Թուհաճյանի և Մտեհան Կուրտեկյանի նման ականավոր դեմքերի: Պոյու հրապարակախոսական կյանքն էր, որ պիտի

դառնար իր նոր դպրոցը «Արևելք»-ի ու «Սուրհանդակ»-ի խմբագրություններում և ապա «Ազատամարտ»-ի մեջ հիմնավորապես: Ահա այդ միջավայրում գործող հայտնի հրապարակախոսներն ու գրողներն էին, որ նոր լիցք տվին իրեն և նա իր կյանքը կապեց հայ գրի ու հայ մշակույթի հետ, միաժամանակ դառնալով նաև հասարակական գործիչ: Սիրունին նախ մտահոգվում է հայ թատրոնով, աջակցում է Վահրամ Փափազյանին՝ 1910 թ. փորձելով հայ թատերական մի ընկերություն կազմել, իսկ 1914 թ. Ռ. Զարդարյանի և Դանիել Վարուժանի հետ մասնակցում է այն հանձնախմբին, որը խաղացանկն էր կազմելու, երբ կովկասահայ ղեկապետական խմբերին, Հովհաննես Զարիֆյանի գլխավորությամբ, հաջողվեց հայրենի հողի վրա թատերական կյանք ստեղծել: Սիրունին միաժամանակ սատարեց մարզական կյանքին ու «Մարմնամարզ» պարբերականի հրատարակմանը և հայկական առաջին ողիմպիականի կազմակերպմանը: Նա կարևոր մասնակցություն ունեցավ նաև էսալյան Սանուց Միության հիմնադրմանը (1908 թ.) և որի հովանու տակ նա 1913 թ. կազմակերպեց Լեոն Շանթին, Գրիգոր Զոհրապին, Դանիել Վարուժանին, Ռուբեն Զարդարյանին, Հովհաննես Սեթյանին և Սիամանթոյին ներկրված հայտնի Գրական Ասուլիսները և հիմնադրեց համանուն պարբերականը: Այս ընդհանուր տիրող ոգևորության մեջ էր, որ նույն՝ 1913 թ. հոկտեմբերին նախաձեռնությունը ստանձնեց Մեծ Դարադարձի հանդիսություններին Պոլսում և Դանիել Վարուժանի հետ խմբագրեց ու հրատարակեց «Նաւասարդ» գրականության և արվեստի տարեգիրքը:


Դեռևս Կեդրոնականի ուսանող էր Սիրունին, երբ 1908 թ. նրան բանտարկեցին: Հաղթելով ազատված և լծված վերոհիշյալ ազգանվեր աշխատանքներին, վրա հասնող Մեծ եղեռնը վերջ էր տալիս մեր մեծ սերնդի տեսիլներին: Սիրունին մազապուրծ ազատված սպանդից, չորս տարիներ թաքստոցում սպասելով իր օրհասին, 1918 թ. զինադադարին էր, որ հնարավորություն էր ունենում կրկին հրապարակ իջնելու: Այս անգամ ևս հրապարակախոսությունը և հասարակական աշխատանքներն էին, որ կլանեցին նրա ժամանակի մեծ մասը: Նրա նախաձեռնության և ճիգերին շատ բան են պարտական Հայկական լիգան, Ազգային խորհրդակցական ժողովը, Հ. Մ. Բ. Մ., Հայ Կարմիր խաչը, Հայ Տրամաքիք-բաղերախումբը, Կոմիտասյան հանձնախումբը, Համազգայինը, Ապրիլյան Սղատունի հանձնախումբը և այլն: 1921 թ. երբ Հովհաննես Թումանյանի՝ Պոլսում գրողներովու առիթով ստեղծվել էր Հայ Արվեստի

Տունը, դարձյալ այստեղ Սիրունին իրեն ընդհանուր քարտուղար կարևոր դեր է կատարում, մինչև որ վրա հասնող բնավական շարժումների հետևանքով ինքը ևս ստիպված՝ շատ-շատերի հետ հրաժեշտ է տալիս Կ. Պոլսին և ապաստան փնտրում օտար ափերում:

1922 թ. էր, որ բախտը Հ. Տ. Սիրունուն նետելու էր Ռումինիայի ափերը: Այդ հյուրընկալ հողում էր, որ նա հանդիպելու էր ամվանի գիտնական ու հայ ժողովրդի մեծ բարեկամ Նիկոլա Յորգային: Վերջինիս խորհրդով էլ նա հաստատվեց Ռումինիայում, և նրա առաջ բացվեցին աշխատանքային նոր հորիզոններ՝ նվիրվելու համար առավելագույն պատմա-բանասիրական աշխատանքներին:

Բուխարեստում ևս Հ. Տ. Սիրունին սկզբում նվիրվեց հասարակական աշխատանքների և հրապարակախոսության: Առաջին տասը տարիներին նա վարեց ռումինահայ թեմական խորհրդի ընդհանուր քարտուղարի պաշտոնը՝ միաժամանակ կարևոր մասնակցություն ունենալով թեմի և գաղութի կազմակերպման աշխատանքներում: Նա 13 տարի շարունակ վարեց նաև Հ. Մ. Բ. Մ.-ի Ռումինիայի շրջանի վարչության նախագահությունը, իսկ մշակութային մարզում՝ նա գլխավոր հիմնադիրներից էր «Կոմիտաս» երաժշտական միության, «Ռումինահայ Կեդրոնական Մատենադարանի», «Հայ Մշակութային Բարեկամների ընկերակցության», «Հայ Մշակութային հիմնարկության»: Դարձյալ նա էր, որ հայ սփյուռքի տարածքի վրա հայ մշակույթի օրը տոնելու գաղափարը արժարձեց 1928 թ. առաջին անգամ և այդ առթիվ լույս ընծայեց «Հայ Մշակութային օր» տարեթիվը: Առավելագույն նրա ջանքերով էլ դարձյալ, որ զույգ եկան. հայ արվեստի ցուցահանդեսը Բուխարեստում (1930 թ.), պրոֆ. Նիկոլա Յորգայի հորեկյանը (1931 թ.), հայ արվեստի երեկոները Բուխարեստում և հայկական օրերը Վրլեն Դե Մունտելում, հայ մշակույթի սյուներից Արշակ Զոպանյանի այցելությունը Ռումինիա (1932 թ.), Աստվածաշնչի թարգմանություն 1500-ամյակի տոնակատարությունը (1934 թ.) և այլն:

Հ. Տ. Սիրունին 1923—1926 թթ. Բուխարեստում ձեռնարկեց «Նաւասարդ» գրականության և արվեստի պարբերականի հրատարակման աշխատանքներին: Դա նախադուր դարձավ նրա համար, բացի գրական գործերից, զբաղվելու նաև հայագիտական հարցերով: Նրա էջերում Սիրունին ուրվագծեց բազմաթիվ հայ գրողների և արվեստագետների կենսագրություններ և սկսեց հայ հիմնավոր զաղութի անցյալը պեղելու աշխատանքներին: Պրոֆ. Յորգայի կողմից Հ. Տ. Սիրունու նկատմամբ ցուցաբերված բացա-



Հորեղարը աշխատանքի պահին

ո՞րքան վերաբերմունքը նրա համար մեծ խրախույս դարձավ՝ աշխատելու հայ և ռումինական ժողովուրդների դարավոր կապերի է՛լ ավելի ամրապնդման ուղղությամբ: Դարձյալ Յորգայի խորհրդով նա ձեռնամուխ եղավ մինչ այդ գրեթե մոռացության մատնված և Ռումինիայի պատմության հետ առնչվող հայկական աղբյուրները ի հայտ բերելու և դրանց միջոցով հյուրընկալ երկրի անցյալի մութ մնացած էջերը լուսարանելու կարևոր գործին:

Բուխարեստում մեծ լիցքավորում ստացան Հ. Ծ. Սիրունու պատմա-բանասիրական ունակությունները: Նա միաժամանակ հայ մշակույթի պատմության և ականավոր դեմքերի մասին գրած ուսումնասիրություններով աշխատակցեց ռումինահայ լրագրող և հեղինակ Վարդան Մեշտունյանի կողմից Բուխարեստում հրատարակվող «Aragat» ռումիներեն հայագիտական հանդեսին և արտասահմանյան պարբերականներին: Այս շրջանից արդեն պատմա-բանասիրական աշխատությունները Հ. Ծ. Սիրունու ստեղծագոր-

ծական կյանքում առաջատար տեղ են զբաղում: Մեր ասածի լավագույն ապացույցն են հանդիսանում նրա խմբագրած և հրատարակած «Արագ» տարեգրքերը (1933 և 1934 թթ.), նրա ստորագրած ուսումնասիրությունները պատմա-բանասիրական բնույթ ունեն և նվիրված են հայ մշակույթի և կամ ուսմանահայերի պատմությանը: Այս շրջանից էլ սկիզբ են առնում նրա բազմապիսի հայագիտական գործերը:

Զինված լինելով հանրագիտարանային մտքով, օժտված բացառիկ աշխատասիրությամբ ու ապշեցուցիչ հիշողությամբ և բեղմնավոր արտադրողականությամբ, Սիրունի-հայագետը հիշատակության արժանի երախտիք ունի հայ ժողովրդի հին, միջին և նոր պատմության, հայ հին և նոր գրականության պատմության, ձեռագրագիտության, աղբյուրագիտության, մատենագիտության, հայ բառարանագրության և բարբառագիտության, մեր թատրոնի պատմության, ուսմանահայ և այլ զաղթավայրերի պատմության ուսումնասիրման գործում:

Պրոֆ. Սիրունու պատմա-բանասիրական աշխատությունները աչքի են ընկնում իրենց հետևյալ առանձնահատկություններով: Առաջին հերթին նրանք արդյունք են երկար ու մանրադնին, բարեխիղճ աշխատանքի և հագեցված են փաստական հարուստ նյութերով: Երկրորդ՝ նրանք գրված են ոչ թե չոր շարադրանքով, այլ զեղարվեստական նուրբ շնչով: Նրա գործերի երրորդ առանձնահատկությունը քան է, որ նա իր համադրական գործերում ոչ միայն եզրակացություններ է անում անցյալի վերաբերյալ, այլև հաճախ ավելի հեռուն դիտելով՝ պատմությունը նոր սերնդին մատուցում է նաև իրեն ապագայի դաս:

Սովոր թիվ են կազմում հայ պատմության և նրա մշակույթին նվիրված հոդվածներն ու ուսումնասիրությունները: Եթե նրանցից մի մասը ավելի ճանաչողական նշանակություն ունի՝ հայ մշակույթն ու պատմությունը ուսմանահայերին և իրենց մայրենի լեզուն մոռացած հայերին մատչելի դարձնելու տեսակետից, ապա նման աշխատությունների մյուս մասը կարևոր ներդրում է հայագիտության տարրեր բնագավառների համար: Այդ տեսակետից, ուշագրավ է հայ բժշկության պատմության վերաբերյալ պրոֆ. Սիրունու «7-րդ դարի մի հայ վիրաբույժ» (1941, ուսմանահայերին) հոդվածը, հայ ժողովրդի պատմության համար՝ «Երզնկան, աստվածների քաղաքը» (1941, ուսմանահայերին), «Թանգիմաթ և հայերը» (1966), և այլն: Զեռագրագիտական առումով հետաքրքրական են նրա «Հայերեն ձեռագրերը, մատենագիտական տվյալներ» (1957, ֆրանսերեն), «Նասիպի ձեռագիրը» (1969)

և այլն: Հայ բառարանագրության և բարբառագիտության համար արժեքավոր են դեռևս 1915 թ. 4. Պոլսում հրատարակված «Զինվորական բառարան»-ը և մասնավորապես ուսմանահայ և առհասարակ Հարավ-Արևելյան եվրոպայի հայկական բարբառներին վերաբերող աշխատությունները (որոնցով նա երկար է զբաղվել՝ 1930—1968 թթ. հայերեն, ուսմանահայերեն և ֆրանսերեն գրած հոդվածներով) և այլն: Հայ թատրոնի պատմության մասին հեղինակը գրել է ոչ միայն հայ հին թատրոնի պատմության վերաբերյալ համադրական ուսումնասիրություններ (հայերեն և ուսմանահայերեն, 1926—1941), այլև մեծ թվով հայ դերասանների խաղի և գործունեության մասին հուշեր, սկսած Մարտիրոս Մնակյանից ու Վահրամ Փափաղյանից, մինչև Զարիֆյան ու Մարության:

Հատորներ կարող են կազմել պրոֆ. Սիրունու կողմից գրված կենսագրական բնույթի մենագրական աշխատություններն ու դիմատվերները: Նրանք ևս գրված են ամենայն բարեխիղճությամբ և փաստական հարուստ նյութերի հիման վրա, սակայն այն բացառիկ առավելությամբ, որ վերջիններս հագեցված են նաև հեղինակի անձնական արժեքավոր հուշերով և դիտողություններով: Այս առավելությունը նկատի ունենալով կարելի է հաստատ ասել, որ հեղինակի՝ նման բնույթի գործերը ունեն նաև սկզբնաղբյուրի նշանակություն: Նման գործերի թվում բավական է միայն հիշատակել Գանիկ Վարուժանին նվիրված մենագրությունը (1940) և «Կոմիտասին հետ» սովոր գործը, որը 5 տարի (1965—1969 թթ.) հրատարակվեց «Էջմիածին» ամսագրում: Նման աշխատությունների շարքում առաջնակարգ տեղ են զբաղեցրել «Զոհրապը և իր ժամանակը» 45 մամուլանոց գործը: Այս ոչ միայն ամենաժանրակալի գործն է՝ նվիրված նահատակ մեծ գրողին, այլև հայկին է նրա ապրած փոթորկահույզ ժամանակաշրջանի: Հեղինակի՝ նման շնչով գրված աշխատություններից են նաև «Հայր Սարգսյանի մեջ» և «Նիկոլա Յորգայի հետ» (նրա ծննդյան 100-ամյակի առթիվ) ծավալուն մենագրությունները, որոնք մամուլի տակ են Բելյուսում: Նրա կենսագրական բնույթի գործերի շարքում կան բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված աշխատող գրողների, նշանավոր հոգևորականների, ազգային գործիչների, արվեստագետների և այլոց մասին, և որոնց ամբողջությունը կարող է կենսագրական ուրույն մի հանրագիտարան կազմել:

Պրոֆ. Հ. Տ. Սիրունին ուսմանահայ զաղթավայրի հին և նոր պատմության ամենամեծ հետազոտողն է: Մինչև իր աշխատանքներին անցնելը, ուսմանահայ (Բողոքան Հաժ-

դեռ, Դոմիտրու Դան քհ. Նիկոլա Յորգա և այլն) և հայ (Պ. քհ. Մամիկոնյան, Գր. Դոյլավ, Լ. Բարայան, Վ. Մեղունյան և այլն) գիտնականներ և ուսումնասիրողներ շնորհակալ մեծ աշխատանք էին կատարել Ռուսիայում հայերի ապրած կյանքը ուրվագծելու ուղղությամբ: Սակայն պրոֆ. Սիրունու աշխատանքները այս հարցում հիմնականում տարբերվեցին իր նախորդների մեծ մասից: Նա ոչ միայն հենվեց անցյալի պատմագրության ժառանգության վրա, այլև աշխատեց հիմնավոր նոր նյութեր հայտնաբերել իր հետագա աշխատանքների համար: Առաջին հերթին նա եղավ Ռուսիայի երբեմնի հայաշատ բոլոր կենտրոններում և շրջելով քաղաքից քաղաք դնեց հայերեն ձեռագրերը և հավաքեց նրանց հիշատակարանների մեծ մասը: Նույն ձևով նա իրագործեց նաև երկրում ցրված հայերեն վիմագիր արձանագրությունների, ուսումնահայերի նյութական մշակույթի առարկաների, հայերեն լեզվով լույս տեսած գրականության և, վերջապես, հայկական եկեղեցիներում և Ռուսիայի պետական դիվանատներում եղող վավերաթղթերի կարևոր մասի հավաքման և ուսումնասիրման աշխատանքները: Պրոֆ. Սիրունու կողմից հրատարակված նման սկզբնաղբյուրային բնույթի գործերից են ուսումնական ուղևորության (1928), «Ռուսիայի հայկական եկեղեցիների հայերեն ձեռագրերը» (1929), «Ռուսիական աղաղեմիայի հայերեն ութ ձեռագրերը» (1932), «Մատենագիտություն Ռուսիայում հրատարակված հայերեն ուսումնասիրությունների» (1940), «Հայկական եկեղեցիները ուսումնական երկրներում» (1943) և այլն: Վերջերս Բուխարեստի և Յաշի վիմական արձանագրություններին նվիրված հատորներում հրատարակվեցին նաև հեղինակի կողմից տարիներ առաջ այդ քաղաքներում հավաքած հայերեն արձանագրությունները: Հանրապարտ համապատասխան հատորներում լույս են տեսնելու նաև Սուլավայի, Բոտոշանի և այլ քաղաքներում եղող հայերեն վիմական արձանագրությունները: Հիշյալ նյութերը հավաքելուն ղեկավարեց պրոֆ. Սիրունին սկսեց գրել և տպագրության հանձնել հայ գաղութի տնտեսական, ազգային և մշակութային անցյալին վերաբերող համադրական գործեր. այդպիսիներից էին. «Հայերը Ռուսիայի մեջ» (հղվածաշար, 1930), «Ռուսիահայ պատմության ժամանակագրություն» (10 մասից, հին ժամանակներից մինչև 17-րդ դ., հայերեն և ուսումնական. վերջինս ավելի կատարյալ, 1935—1943), «Հայերը ուսումնական երկրների տնտեսական կյանքում» (1944, ուսումնական), «Հայ եկե-

ղեցին ուսման հողի վրա» (1966) և այլն: Դեռ չենք հիշատակում նաև հեղինակի մյուս գործերը՝ նվիրված ուսումնահայ գաղութների պատմությանը, թեմի հիմնադրությանը, ներանց ֆուլկլորին, հայերը 1848 թ. շարժման ժամանակ, հայկական նախաձեռնությունը Ռուսիայում նոր ժամանակներում և այլն: Ամբողջացնելու նպատակով գաղթավայրի պատմությունը, անխոնջ պրպտիչը այստեղ ևս ձեռնամուխ եղավ ուսումնահայ նշանավոր գեմբերի կյանքին ու գործին նվիրված ուսումնասիրական աշխատանքներին: Այդ շարքից են հայտնի իրավաբան և բանասեր Գրիգոր Պլյուզիուի, վերջինիս հայր և մուղավահայերի մշակութային վերածնունդի ռահվիրա Հակոբ Պլյուզիուի, հայազգի նախկին նախարար Գրիգոր Տրանկու-Յաշի (Դրանխոյան), որն իր գրաված ամենաբարձր գիրքերում միշտ հպարտ է եղել իր հայությանը, ականավոր փրկիստփա Վասիլ Կոնտայի, վաղամեռիկ պրոֆ. բանաստեղծ Վիկտոր Կոզմինի, նշանավոր դիվանագետ Սանովի բեյ Միրզայանի և ուրիշների մասին գրած ուսումնասիրությունները:

Անհրաժեշտ է այս առթիվ նշել, որ պրոֆ. Սիրունին իր հետազոտությունների ընթացքում չսահմանափակվեց միայն ուսումնահայ գաղթավայրի պատմությամբ, նա իր ուշագրությունը բեռնեց նաև ուսումնահայերի հետ առնչվող այլ գաղթավայրերի՝ ինչպես Ղրիմի, Լեհաստանի, Ուկրաինայի և ուրիշ հայկական գաղթավայրերի պատմության վրա: Այս առումով բացառիկ արժեք է ներկայացնում Կ. Պոլսի հայերի պատմությանը նվիրված նրա հինգ սովոր հատորներից բաղկացած կոթողական գործը, որը դառնալու է այդ մեծ կենտրոնի 1453—1922 թթ., այսինքն 500-ամյա կյանքի պատմության հանրագիտարանը և որի երկու հատորները արդեն իսկ լույս են տեսել: Ի լրումն մի ամբողջ հիմնարկության գիտական արտադրանքը գերազանցող իր աշխատությունների՝ բազմավաստակ հեղինակը վերջերս ավարտել է հսկա նոր մի աշխատություն, որը վերնագրել է համեստորեն «Հայ եկեղեցիների Հարավ-Արևելյան Եվրոպայի մեջ» անունով, այնինչ երեք սովոր հատորներից բաղկացած իր այդ գործը փաստորեն ցարդ մեղ հայտնի ամենամարդջական աշխատությունն է լինելու Լեհաստանի, Մոլդովայի, Վալաքիայի և Տրանսիլվանիայի հայ գաղթավայրերի պատմության:

Նկատի ունենալով միայն վերոհիշյալ բնագավառում հեղինակի ունեցած հսկա վաստակը, մենք կարող ենք առանց երկմտելու ասել, որ հանձին պրոֆ. Հ. Ճ. Սիրունու մենք այսօր ունենք հայ գաղթավայրերի

պատմության մեր ամենաբեղմնավոր և ամենամեծ հեղինակությունը:

Սակայն հիշյալ հայագիտական գործերով չի սահմանափակվում ասպակի պատմաբանի ու բանասերի գիտական վաստակը: Հ. Ճ. Սիրունին Ռումինիայում հայտնի է նաև իբրև հայկական աղբյուրները ռումինական ժողովրդի պատմության համար հմտորեն օգտագործող գիտնական, ինչպես նաև իբրև ճանաչված արևելագետ: Այս առումով էլ պերճախոս ու ճշմարիտ են հնչում Բուխարեստում վերջերս հեղինակի 80-ամյա հոբելյանի առթիվ ռումինացի գիտնականների այն խոսքերը, ըստ որոնց պրոֆ. Սիրունին հավասար չափով պատկանում է մեկից ավելի ազգերի և մշակույթների: Նրա աշխատությունների թվում կան այնպիսիները, որոնք կարևոր լույս սփռեցին ռումինացի ժողովրդի պատմության մուլթ ծալքերը լուսաբանելու գործում և կամ ի հայտ բերեցին անծանոթ էջեր ռումինացիների և թուրքերի միջև գոյություն ունեցած հարաբերությունների մասին: Նա տարիներ շարունակ ռումինական ակադեմիայի գիտական ժողովածուներում և այլուր լույս է բնծայել Հ. Ղ. Ինճիճյանի, Կամենիցյան հայ տարեգրության, Հակոբ Թոխատեցու, 7-րդ դարի աշխարհացույցի, Վարդանի աշխարհացույցի, հայերեն ձեռագիր հիշատակարանների և այլ հայկական աղբյուրների բնագրերը, որոնք կարևոր նշանակություն ունեն Ռումինիայի պատմության վերաբերյալ: Նրանք լույս են տեսել անհրաժեշտ ուսումնասիրություններով և ծանոթագրություններով: Գիտնականի նման գործերը բարձր գնահատականի արժանացան ռումինական գիտական հասարակության և առաջին հերթին Նիկոլա Յորգայի կողմից: Ռումինական գիտական մամուլում դրական բաղմամբով գրախոսություններ են լույս տեսել նաև հեղինակի կողմից ռումինական պատմության վերաբերյալ թուրքական աղբյուրների հրատարակման մասին: Այդ բնույթի գործերից գիտական որոշակի արժեք ունեն հատկապես «Ռումինացի իշխանները Բարձրագույն Դուռն մոտ» (1941), «Թուրքական դրամները ռումինական երկրներում» (1944) և այլ գործերը, բոլորն էլ հրատարակված ռումիններեն լեզվով: Նման բնույթի գործերում ևս կան նյութեր, որոնք կարող են շահագրգռել նաև հայ ժողովրդի պատմության և մասնավորապես ռումինահայ գաղութի պատմության հարցերով զբաղվողներին: Այդպիսին է, օրինակ, նրա «Թուրքական հրոսակախմբերի անծանոթ մի արշավանքը Ռումինիայում 1769 թ.» աշխատու-

թյունը, ուր հավաստի տեղեկություններ կան նաև նույն թվականին Բուխարեստի հայ եկեղեցու գոյության մասին, մինչ այդ որոշ գիտնականներ 1781 թ. էին հիշատակում իբրև հին հայկական եկեղեցու հիմնադրության թվական, այնինչ այդ վերաբերում էր եկեղեցու միայն վերստին կառուցմանը:

Նկատի ունենալով պրոֆ. Սիրունու արեւելագիտական աշխատանքները, ռումինական մեծ ժողովրդականություն վայելող հանդեսներից «Մագազին»-ը գիտնականի 80-ամյակի առթիվ գրած հոդվածը վերնագրել էր. «Ռումինական արևելագիտության ավագագույն ներկայացուցիչը»², իսկ նրա հոբելյանական հանդիսությանը զխավոր զեկուցող, հայտնի արևելագետ Միհայիլ Գուրօղուն ընդգծում էր ասելով, որ նա «Արևելագիտական ուսումնասիրությունների ճանապարհը բացեց Ռումինիայում և միաժամանակ հիմք դրեց ռումինական դիվանների թուրքական վավերագրերի հրատարակության»³: Սակայն պետք է նշել, որ այս բնագավառում ևս անխոնջ հետազոտողը ունի հրատարակության համար պատրաստ վիճակում մեծ թվով աշխատություններ, որոնցից հատկապես մեծ արժեք է ներկայացնում «Ռումինական երկիրները 19-րդ դ. սկզբին Մանուկ բեյի դիվանի թուրքերեն և հայերեն վավերագրերի լույսի տակ» բազմահատոր աշխատությունը (աշխատակցությամբ պրոֆ. Յոն Յոնաշկուի) և որը ըստ պրոֆ. Գուրօղուի «Կոչված է մեծ լույս սփռելու Հարավ-Արևելյան նվորայայի ժողովուրդներին շատերու անցյալին վրա»: Նրա տպագիր ու անտիպ ման բնույթի աշխատությունները նկատի ունենալով է, որ նույն ռումինացի նշանավոր արևելագետը հայազգի մեծ պրպտողի մասին եզրակացնում է գրելով, որ նրա «Արևելագիտական վաստակը իր ամբողջությանը մեջ դիտված ճշմարիտ գանձ մը կը կազմեն»⁴:

Անխոնջ երախտավորի հայագիտական աշխատանքների, ինչպես նաև ռումին ժողովրդի պատմության լուսաբանման գործում նրա կարևոր մասնակցության մասին լավագույն գնահատականն է տվել ռումինացի պրոֆ. էուզեն Սանդան գրելով. «Մայր հայրենիքի սահմաններեն դուրս ապրող շատ քիչ թիվով հայեր այնքան մեծ ծառայություններ բերած են իրենց ազգին ու շատ քիչ թիվով ռումինացիներ—ռումին կամ օտար ծագումով—ավելի մեծ նպաստ մատուցած են ռումին ժողովուրդին՝ մասնավորաբար այն,

² „Magazin“, Bucuresti, 30 mai 1970, № 660.

³ «Նոր կյանք», Բուխարեստ, 22 մայիսի 1970, № 19 (1035):

⁴ Նույն տեղում.

¹ «Նաիրի», Բելյուժ, 10 մայիսի 1970, № 49 և «Նոր կյանք», Բուխարեստ, 22 մայիսի 1970.

ինչ կպատկանի Պալքանյան ժողովուրդներու փոխհարաբերություններու պատմության և բանասիրության»:

Պրոֆ. Սիրունին մեծ երախտիք ունի իբրև հայ-ռումինական դարավոր բարեկամական կապերի ջատագով և ամրապնդող: Անգնահատելի են հատկապես նրա ծառայությունները հայ պատմությունն ու հայ մշակույթը ուումինացիներին ճանաչելի դարձնելու գործում: Բավականանա՞նք այս առթիվ միայն հիշատակելով նրա կողմից հրատարակված և խմբագրված «ANI» հայ մշակույթի եռամսյա պարբերականի (1935—1938) և համանուն տարեգրքի (1941—1942/1943) լույս ընծայումը, որը իրավամբ կարելի է համարել ուումիններեն լեզվով լույս տեսած հայագիտական եզակի մի հանրագիտարան: Բավական է միայն նշել, որ այնտեղ շոշափվել են հայագիտության հետ առնչվող գրեթե բոլոր կարևորագույն հարցերը, և նրանք պատկանում են ինչպես իր, այնպես էլ հայ, ուումինացի և օտար հայագետների գրչին: Այն ամբողջությամբ վերցրած բովանդակում է ավելի քան 2000 էջեր և 330 լուսանկարներ: «ANI»-ն ուումինացի հասարակայնության և մտավորականության մեջ սեր և համակրանք է առաջացրել դեպի հայ մշակույթը և այն ստեղծող հայ ժողովուրդը: Հանդեսը լույս է սկսել տեսնել Յորդայի հովանավորությամբ, որն իր ողջունի խոսքում գրել է. «Այսպիսով ունենալու ենք հայագիտության իսկական մի ձեռնարկ, որի օգուտները անկասկած շատ մեծ են լինելու»: Եվ կամ մի այլ անդամ նշել, որ «Սիրունու գործը արժանի է ամեն մի գովեստի»: Նշանավոր արվեստաբան, Ռումինական ակադեմիայի ներկայումս ակադեմիկոս պրոֆ. Գ. Օպրեսկուն նկատի ունենալով հայ արվեստի ազդեցության հետքերը ուումինական արվեստի վրա, գրել է. «Իրոք արվեստաբան (ANI»-ն) ինձ շատ է հետաքրքրում, քանի որ միջնադարի այնքան մասնագետների ուսումնասիրություններից հետո, այսօր իրավունք չունենք անտեսելու Հայաստանի ազդեցությունը: Այսպիսով Դու մեզ համար ևս ծառայություն մատուցեցիր, միաժամանակ մեծ աշխատանք կատարելով քո ժողովրդի համար»: Ռումինական ակադեմիայի բազմաթիվ պատկառելի և վաստակաշատ գիտնականներ շատ բարձր գնահատեցին հայ մշակույթին նվիրված այս պարբերականի երևումը: Հիշենք միայն ուումինական ակադեմիայի նախագահ, այժմ

հանգուցյալ, մեծանուն բնախույզ, ակադ. Յոն Սիմիոնեսկուի կարծիքը. «Շնորհակալություն եմ հայտնում գեղեցիկ տարեգրքի համար, որի միջոցով ի կատար ածեցիր սրբազան մի պարտականություն՝ մշակույթի և արվեստի դրսևորումներով այնքան հարուստ անցյալ ունեցող հայ ժողովրդի նկատմամբ: Այն օրինակելի մի գործ է»:

«ANI»-ի երևումը համընկնում էր Ռումինիայում հետզհետե ծայր առնող ազգայնական դրսևորումների ժամանակաշրջանին, որն ի վերջո հանգելու էր ֆաշիզմին: Նման տարիներին ուումինական հասարակայնության և նրա մտավորականության մեջ հայերի նկատմամբ համակրություն ստեղծելը բարձր է ամեն մի գնահատանքից: Այդ առումով շատ դիպուկ են ներկայումս հայտնի պատմաբան և ակադեմիկոս Անդրեյ Օցետեայի գրած հետազոտողները «Ani»-ի մասին. «Մարդկանց միջև գոյություն ունեցող թշնամական այս հարաբերությունների պահին, բարեկամության ոգով եղող այս վկայությունը ինքնին քաղաքակրթություն հատկանշող մի գործ է»⁵: Թեև «Ani»-ն եղել է հիմնականում հայ մշակույթի անցյալին նվիրված պարբերական, սակայն նրա յուրաքանչյուր համարում պրոֆ. Սիրունին լայն տեղ է տվել նաև Սովետական Հայաստանում հայագիտության և արվեստի ծաղկմանը, այսպիսով իր ընթերցողներին հաղորդակից դարձնելով նաև հայ ժողովրդի ներկային:

Հայ-ռումինական դարավոր բարեկամության պատմության մեջ հիշատակության արժանի խոշոր երևույթ է պրոֆ. Սիրունու հիմնադրած «ANI» հանդեսի և «Հայ մշակույթի հիմնարկության» շնորհիվ ուումինացի գիտնականների մեջ ստեղծված ոգևորությունը: Ռումինացի անվանի բազմաթիվ պատմաբաններ, բանասերներ ոչ միայն համակվեցին հայերի նկատմամբ մեծ սիրով, այլև իրենք իսկ սկսեցին հետաքրքրվել ու գրադվել հայագիտական զանազան հարցերով: Այսպես է, որ «ANI» տարեգրքերին սկսեցին իրենց աշխատակցությունը բերել ակադեմիկոս իրենց աշխատակցությունը բերել ակադեմիկոս Նիկոլա Բընեսկուն, Նիկոլա Յորդայի անձնական քարտուղար և նրա աշխատությունների եռահատոր մատենագիտության հեղինակ Բարբու Թեոդորեսկուն, ուումինական պետական արխիվների տնօրեն, պրոֆ. Աուրելիան Սաչերդոցեանուն, պրոֆեսորներ Նիկոլա Գինեան, Դամիան Բոգդանը, Դան Սիմիոնեսկուն, Յոն Ռադու Միրչեան, հայտնի ճարտարապետ-

⁵ «Նաիրի», Բելյուրթ, 10 մայիսի 1970, № 49:

⁶ «Ani», Revistă de Cultură armeană, București, anul I. V. I. 1935 dec. p. 1.

⁷ «Ani», Anuar de cultură, armeană, 1942-1943, p. 669.

⁸ Նույն տեղում, էջ 7:

⁹ «Ani», Anuar de cultură armeană, 1942-1943, București, 1943, p. 668.

արվեստաբան, ակադ. Ն. Կիզա Բուդեշտը և ուրիշներ:

Պրոֆ. Զ. Ճ. Սիրունին միաժամանակ կարեւոր գործ է կատարել նաև փոխադարձաբար ուսմանական մշակույթը հայ ընթերցողին ծանոթացնելու գործում: Նրա այս բնույթի բազմաթիվ գործերից բավականանա՞նք հիշատակել միայն Ռումինիայի ամենամեծ բանաստեղծ Միհայիլ Էմինեսկուին նվիրված հատորը, որի հայկական ծագում ունենալու հարցի մասին ուսմանական մամուլը ժամանակին շատ է զբաղվել, և նրա բանաստեղծություններից կատարված հայերեն թարգմանությունները: Էմինեսկուի նշանավոր մասնագետ և նրա ստեղծագործությունների ակադեմիական հրատարակության կազմող ակադեմիկոս Պերպեսիշիուրի «Զ. Ճ. Սիրունու ուսմանական աշխատությունները» հոգովածում գրում էր, որ «Հայ թարգմանիչը խորաթուփանց մեկնաբան է և մեկը ամենախորազգաց ճանաչողներից Էմինեսկույան աշխարհի»¹⁰: Իսկ Նիկոլա Յորգան, որ շատ էր սիրում Էմինեսկուի բանաստեղծությունը լսել հայերենով, գրում էր, որ նրա հայերեն թարգմանությունների մեջ զգացվում է «Էմինեսկույան ուրիշ»¹¹: Վերջերս դարձյալ պրոֆ. Սիրունու 80-ամյա հոբելյանին Էմինեսկուի կենսագրության մասնագետ պրոֆ. Էուջեն Սանդան խոսելով հոբելյարի՝ Էմինեսկուից կատարած թարգմանության մասին, իր խոսքը եզրափակում էր ասելով. «Նա իր անունը արձանագրած է հայ և ուսման մշակութային կայքերու հին թե նոր պատմության մեջ, հանդիսանալով միանգամայն ուսման բանաստեղծության առաջին զեսպանը հայ ժողովրդի մոտ և նույն ատեն՝ հայագիտության ու մշակույթի ամենեն հեղինակավոր ներկայացուցիչը Ռումանիո մեջ»¹²:

Պրոֆ. Սիրունու հասարակական աշխատանքների թվում բացառիկ տեղ է գրավում ուսմանահայոց մտքի զանազարան՝ «Հայ Մշակույթի Տան» փառավոր շենքի ստեղծումը, որը նա գլուխ բերեց Հովսեփի և Վիկտորիա Տուտյան ընտանիքի բարերարության միջոցով: Այգտեղ է, որ նա տեղափոխեց «Ռումինահայ կեդրոնական գրադարան»-ում (որը գտնվում էր հայկական դպրոցի շենքում) կուտակված և սակայն անցյալում Ռումինիայի զանազան բազմաթիվ գրաված ու կորստյան մատնվելու դատապարտված և հիմնականում իր ջանքերով հավաքված մեր ժողովրդի նյութական մշակույթի բազմաթիվ նշխարները, այդ թվում՝ ձեռագրեր, վավերագրեր, հնատիպ հավաքչուտ գրքեր, մա-

մուլի հավաքածոներ, խորանի վարագույրներ և այլ թանկարժեք իրեր: «Հայ Մշակույթի Տունը» սկզբնական շրջանում ունեցավ իր թանգարանը, մատենադարան-ընթերցարանը և մշակութային շրջանակը, որը իր ձոխության միակը եղավ բուլանդակ Հարավ-Արևելեյան Եվրոպայի հայ գաղթավայրերում և մեծ պատիվ բերեց հայ անվանը¹³:

Հոբելյարը իր կարեւոր լուսման է մուծել նաև Ռումինիայում հայագետների և մասնավորապես արևելագետների պատրաստման գործում: Երկար տարիներ նա հայերեն և թուրքերեն զասական և ժամանակակից լեզուներ է դասախոսել Բուխարեստի բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններից Արևելյան Եվրոպայի հետազոտությունների ինստիտուտում, Արխիվաբանական բարձրագույն վարժարանում և Բալկանյան ինստիտուտում: Այս առթիվ հիշատակության արժանի է նաև փաստաթղթերի հրատարակման նոր եղանակը, որը կիրառվեց նրա կողմից: Հայտնի արևելագետ պրոֆ. Մ. Գուրոլուն այդ մասին ասել է. «Ինքն էր, որ նոր մեթոդ մը ներմուծեց արևելեյան աղբյուրներու հրատարակության մեջ, մեթոդ, որ կկայանա խիստ պայծառ, սիստեմատիկ, բնագրին հարազատ և ֆարսի-միլներու ընկերացած թարգմանության մը մեջ»¹⁴: Ռումինական գիտական շրջանակներում իր ունեցած արգասավոր վերահիշյալ գործունեությունից բացի, պրոֆ. Սիրունին ջանք չի խնայել նաև հայ գաղութի ներսում հայ երիտասարդը հայ պահելու համար: Այս առթիվ, բացի նրա կարդացած բազմաթիվ հրապարակային դասախոսություններից, հատկապես հիշատակության արժանի են նրա կողմից կազմակերպված շարժական հերթական դասախոսությունները և կամ գրույցները, որը նա անց էր կացնում, «Ուսանողական միության» և հատկապես «Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի սրահներում՝ «Նոթեր հայ գրականության պատմության» և «Հայ մտքի ձիգը վերջին դարերու ընթացքին» խորագրերով: Գասախոսությունների և գրույցների այս շարքերին հետևում էին գաղութի երիտասարդ մտավորականներից՝ ազգային վարժարանի ուսու-

¹⁰ Նույն տեղում, էջ 580:

¹¹ «Նաիրի», Բեյրութ, 10 մայիսի 1970, № 49:

¹² Բուխարեստի «Հայ Մշակույթի Տան» մասին տողերիս ստորագրողը անդրադարձել է ընդարձակորեն սույն ամսագրում (տե՛ս «Էջմիածին», 1948, № 5—6, և 10—12): Ներկայումս զբախտարար հայ գաղութի նորացման հետևանքով նրա շենքը վարձու է տրված շրջանային գրադարանին, իսկ թանգարանի և գրադարանի հիմնական մասը տեղափոխված է Բուխարեստի հայոց առաջնորդարանին առընթեր բացված թանգարանում:

¹³ «Նոր կյանք», Բուխարեստ, 22 մայիսի, 1970, № 19 (1035):

ցիլներ, Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի շրջանավարտներ և այլն, և որոնցից ոմանք ներկայումս թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում նվիրված են հայապահպանման պատասխանատու աշխատանքներին: Հայագիտական հիշյալ դասախոսական շարքին հետևում էին նաև դանադան արհեստներով զբաղվող, սակայն հայեցի ուսման ծարավի երիտասարդներ, որոնք ևս հաղորդակից էին դառնում հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմությանը և նրանց հետ կապված և բիշ հայտնի կարևոր հարցերին:

Նվ այս բոլորը շարունակել է նա միշտ զոհողությամբ և առանց վարձատրության...

Հ. Ճ. Սիրունին 1944 թվականից սկսած շուրջ տասը տարի զրկվեց աշխատանքի բնականոն պայմաններից, բայց դարձյալ չդադարեց ստեղծագործելուց: Այդ ալն ժամանակն էր, որ, ինչպես գրում է, «Սկսած էր համազրկելու տասնյակ տարիներու իր հետազոտությունները՝ մենագրական աշխատանքներու վերածելու համար զանոնք, ինչպես նաև տպագրության պատրաստելու իր գրական էջերը, ոչ ոնք դիզվեր էին տարիներու ընթացքին, և զիմաստվերները զեմբերուն զորս ճանչցեր էր»:

1955 թվականին ուսմանական գիտական հաստատություններ, էին, որ նրան հրավիրեցին աշխատանքի: Նախ Բուխարեստ քաղաքի Պատմության թանգարանի տնօրենության կողմից նրան հանձնվեց հրատարակության պատրաստելու համարվավոր Մանուկ բեկի հարուստ դիվանը: Ապա նա գործակցեց ուսմանական ակադեմիայի չորս տարբեր բաժանմունքներին, մատչելի դարձնելով 1821 թ. հեղափոխությանը վերաբերող թուրքական վավերագրերը, ուսմանական հոդում տպագրված հայերեն հրատարակությունների մատենադիտությունը, ուսմանական երկրների մասին հայ ուղևորների նոթերը և վերջապես՝ Ռումինիայում գտնվող հայերեն վիմական արձանագրությունները: Ապա նա հրավիրվեց Պետական արխիվների վարչության կողմից ուսմանական երկրում հայտնաբերված հայերեն վավերագրերին ծանոթանալու և ուսմանական անցյալի հետ առնչվող թուրքական աղբյուրները ճանաչելի դարձնելու գործին: Հաջորդաբար նա հրավիրվեց աշխատելու նաև Զինվորական կենտրոնական թանգարանում՝ արևելյան զենքերի արձանագրությունները բացահայտելու համար, և ապա մասնակցեց Ռումինիայի Արևելագետներին բաժանմունքի հիմնադրմանը և զխափորեց հայագիտական բաժինը՝ մաս կազմելով նրա ղեկավար մարմնին իբրև փոխ-տնօրեն և նրա պաշտոնաթերթ «Studia et Acta Orientalia»-ի խմբագրության, ուր և բերեց իր աշխատակցությունը և վերջին տասը տարիներին հայագիտական բազմաթիվ դասախոսություններով հանդես եկավ այդ բաժանմունքի գիտական նիստերին: Այս շրջանում նրա հրատարակած հոդվածները լույս տեսան հրատարակել հոդվածաշարերի ձևով մենագրություններ՝ ակնավոր հայ հոգևորականների՝ Նիդիշ արք. Դուրյանի, Գարեգին պատրիարք Խաչատուրյան-Տրապիզունցու, Մաղաբիա արք. Օրմանյանի, Կոմիտաս վարդապետի մասին, ինչպես նաև «Պոլիս և իր դերը» և այլ գործեր:

Ապրելով հայրենիքից հեռու, նա միշտ զգացել է, որ առանց հայրենի հողի հնարավոր չէ տեսականորեն պահպանել հայության կյանքը և առանց հայրենի ավշի հնարավոր չէ ստեղծել հայ մշակույթ: Դեռևս 1924 թ. երբ մեր վերածնված հայրենիքը իր նոր կյանքն էր սկսում կերտել, «Նախաարգ» հանդեսում գրում էր պրոֆ. Սիրունին. «Հայրենի հողի վրա է, որ պիտի կենտրոնանան վերջի վերջո մեր բոլոր ճիգերը, մեր հայրենի մշակույթը վերստեղծելու համար: Դուրսը թափված սերմերը, որքան ալ զորավոր ըլլան՝ չեն կրնար փոթորիկներուն դիմանալ»¹⁴:

1965 թ. գալով հայրենիք կատարվում էր ոչ միայն իր իղձերը, այլ նաև իր և հայ ժողովրդի մեծ բարեկամի՝ 1940 թ. ֆաշիստական զնդակներին զոհ դարձած մեծանուն Նիկոլա Յորգայի մարգարեական խոսքերը: Նվ իսկապես, 1938 թ. էր, որ Վրեն դե Մունտում պրոֆ. Հ. Ճ. Սիրունու պատվին ժողովրդական Համալսարանի և քաղաքապետի կողմից կազմակերպված հավաքության, օրվան նախագահող Նիկոլա Յորգան զրվատելով հայագի գիտնականի ջանքերը հայ և ուսման ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, վերջում եզրափակում էր ասելով. «Շն հավատում եմ, որ դու, որ ինձանից ավելի երիտասարդ ես, հասնելու ես այն օրվան, երբ առանց մեղ լքելու, դառնալու ես քո նախնիների երկիրը, տեսնելու համար գեղեցկությունները բնության և արվեստի, որոնք այսօր էլ հաղթանակում են այնտեղ, և վերադառնալու ես քո այստեղի բարեկամներիդ բերելով քո սրտի համար ամենագեղեցիկ ավետիսը՝ թե Հայաստանը հարուստ է առեղ»¹⁵:

Նվ իսկապես, 1965 թ. նա տեսավ իր սեփական աչքերով Հայաստանի հարությունը՝ երբ նույն տարին հայրենիքում հանդես եկավ այդ բաժանմունքի գիտական նիստերին: Այս շրջանում նրա հրատարակած հոդվածները լույս տեսան հրատարակել հոդվածաշարերի ձևով մենագրություններ՝ ակնավոր հայ հոգևորականների՝ Նիդիշ արք. Դուրյանի, Գարեգին պատրիարք Խաչատուրյան-Տրապիզունցու, Մաղաբիա արք. Օրմանյանի, Կոմիտաս վարդապետի մասին, ինչպես նաև «Պոլիս և իր դերը» և այլ գործեր:

¹⁴ Հայկական ՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմություն, հատոր VII, Երևան, 1967, էջ 585:

¹⁵ „Neamul Românesc“, 25 august, 1938:

նիքում և սփյուռքում համայն հայութիւնը նշում էր Մեծ եղեռնի 50-ամյակը: Ինչպիսի մեծ զուգահեռություն՝ Մեծ եղեռնից վերապորոզ մտավորականը հայաջինջ սպանդի 50-ամյակն էր նշում՝ կանգնած իր վերածնված հայրենիքի հետ դեմ առ դեմ... Եղեռն և Վերածնունդ: Նա տեսնում էր վերածնված ժողովրդի հոգում իր նահատակ եղբայրների անկատար երազների ողջ իրականացումը: Պրոֆ. Սիրունին եղավ հայրենիքում նաև 1966, 1968, 1970 թվականներին և մոտիկից հաղորդակից եղավ հայ ժողովրդի մեծ վերելքին և հոգեկան կապեր հաստատեց հայրենիքում ստեղծագործող իր մտքի և գրչի եղբայրների հետ: Այս առթիվ բավական է հիշատակել ութսունից ավելի նրա կարդացած դասախոսությունները և ունեցած զրույցները այդ այցելությունների ժամանակ՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Արվեստի, Պատմության, Լեզվի և Արևելագիտության ինստիտուտներում, պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, Սովետական Հայաստանի Գրողների տանը, Մաշտոցյան Մատենադարանում, Արխիվային վարչությունում, Գրականության և Արվեստի թանգարանում, և Արտվյանի անվան պետ. մանկավարժական ինստիտուտում: Ճարտարապետների տանը, էջմիածնի ճեմարանում և այլն, զեռ առանց հիշելու ցանազան հանդեսների խմբագրությունների կողմից կազմակերպված հանդիպումներն ու տոնական առիթներով ունեցած իր ելույթները:

Անխոնջ գիտնականի երկարամյա ծառայությունները հայ մշակույթի ասպարեզում ջերմ գնահատանքի արժանացան մայր հայրենիքում: 1966 թ. հոկտեմբերի 9-ին՝ Թարգմանչաց տոնին և Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյա հոբելյանի հանդիսության օրը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պրոֆ. Սիրունու կուրծքը զարդարեց ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով: Միաժամանակ նշելով, որ «Նա քչերից մեկն է, եթե ոչ միակը, Վարուժանի ու Սիամանթոյի և մեր մյուս նահատակ մտավորականների սերունդից, որ ահա մոտ 60 տարի է, Կ. Պոլսում և ապա Ռումինիայում, աննահանջ կործնվով ու նվիրումով, հաճախ դժվարին պայմանների ու տառապանքների մեջ, ծառայում է հայ մշակույթին և մեր ժողովրդին, իր մտքի լույսն է բաշխում պատկառելի գրական-գի-

տական աշխատություններով»¹⁶: Բազմա-վաստակ հայագետը երրորդ հայ մտավորականն է, որ հանգուցյալ ականավոր պատմաբան Արշակ Ալպոյաճյանի և պրոֆ. օր. Սիրարփի Տեր-Ներսեսյանից հետո արժանացավ հայրապետական այդ բարձր գնահատանքին: Նա միաժամանակ դարձավ փրնտրոված, մնայուն աշխատակիցը հայրենի «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Մատենադարանի», ՀԳԱ «Լրաբեր», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Բանբեր համալսարանի», «Գարուն», «Հայրենիքի ձայն», «Գրական թերթ» և այլ պարբերականների: Նա իր աշխատակցությունն է բերում նաև սփյուռքահայ «Հանդէս Ամսօրեայ» (Վիեննա), «Նաիրի» (Բեյրութ), «Էջեր գրականության և արվեստի» (Բեյրութ), «Նոր աշխարհ» (Նյու-Յորք), «Նոր կյանք» (Բուխարեստ) և այլ պարբերականներին:

Պրոֆ. Սիրունու հայրենի ուղեւորությունները երիտասարդական նոր ավյուն տվեցին նրան և «Բուխարեստի ձգնալորը» ավելի մեծ թափով վերսկսեց համագրել իր մենագրությունները՝ մեծ ու բացառիկ եռանդով: 1970 թվականը ողեւորության նոր մի շրջան եղավ նրա համար, երբ սփյուռքում և հայրենիքում նշվեց նրա 80-ամյա հոբելյանը: Մայր հայրենիքի գիտության ամենաբարձր կաճառում՝ գիտությունների ակադեմիայի սրահում, հայրենի մտավորականության ներկայությամբ մեր բազմաթիվ գիտական հաստատությունների ղեկավարների և գիտության մշակների գնահատական-ելույթներով խոր հարգանք և երախտագիտություն մատուցվեց Սիրունու վաստակի հանդեպ: Մաշտոցյան Մատենադարանի տնօրենությունը «Մեսրոպ Մաշտոցի» մեղալով պարգևատրեց նրան, մի շարք գիտական ինստիտուտներ իրենց շնորհավորագրերը նվիրեցին, իսկ հայտնի գիտնականները նրան ցանկացան առողջ և երկար տարիներ՝ իր կիսատ գործերը ի կատար ածելու համար: Արևշատություն և նորանոր բեղմնավոր տարիներ հայադիտության բազմավաստակ երախտավորին ոչ միայն իր կիսատ գործերը իր լրումին հասցրեցին, այլև նրանց շուտափույթ հրատարակումը տեսնելու համար՝ ի փառս հայ մշակույթի և հայագիտության:

Ս. ՔՈՂԱՆՋՅԱՆ

¹⁶ «Էջմիածին», 1966, № 9—10, էջ 51: